ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Բնօգտագործման տնտեսագիտություն» մագիստրոսական ծրագրի առանցքն են կազմում շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման տնտեսական հարցերը: Այդ խնդիրների թվին են պատկանում պետական տնտեսական քաղաքականությունը, պետության միջամտությունը շրջակա միջավայրի աղտոտման վերահսկման կարգավորման ոլորտում, բնական ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ արդյունահանման և օգտագործման պլանավորումը, հողային, ջրային ռեսուրսների և ընդերքի տնտեսական գնահատման, արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, ագրոպարենային համակարգի կարգավորումը և օրգանական կայուն տնտեսության զարգացումը, կլիմայի փոփոխության և հարմարվողականության միջոցառումները, կայուն զարգացմանն անցման և նպատակների իրականացման գործողությունները, էկոապահովագրության և էկոաուդիտի որպես շրջակա միջավայրի որակի կառավարման գործիքների ներդրման հարցերը, երկրոդային ռեսուրսօգտագործման տնտեսական խնդիրները:

Ծրագրի տևողությունը

2 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
14:00-18:00

Ուսման վճարը (տարեկան)

520.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

1.Էկոլոգիական իրավունքի հիմունքներ
2.Տեղեկատվության տրամադրման կանոնակարգերը բնօգտագործման տնտեսագիտությունում
3.Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական հիմունքներ
4.Էկոլոգիական ստանդարտացում և սերտիֆիկացում
5. Զարգացման ռազմավարությունների էկոլոգոտնտեսական վերլուծություն
6. Գիտական հետազոտության մեթոդաբանություն
7.Ագրոպարենային համակարգի հիմնախնդիրներ
8.Կլիմայի փոփոխության տնտեսական հիմնահարցեր

երկրորդ կիսամյակ

1.Անտառային տնտեսության էկոնոմիկա
2.Էկոաուդիտի հիմունքներ
3.Երկրորդային ռեսուրսների էկոնոմիկա
4.Բնապահպանական փորձաքննության հիմունքներ
5.Ջրային տնտեսության էկոնոմիկա
6.Ընդերքի էկոնոմիկա

երրորդ կիսամյակ

1.Կայուն զարգացում և գլոբալ անվտանգություն
2.Ռեգիոնալ էկոքաղաքականություն
3.Շրջակա միջավայրի կառավարման ժամանակակից մոդելներ
4.Էկոլոգիական ռիսկի գնահատում և կառավարում
5.Էկոլոգիական ապահովագրության հիմունքներ
6.Այլընտրանքային էներգիայի տնտեսական հիմունքներ

Գիտահետազոտական փորձառություն
(տևողություն՝ 10 շաբաթ)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Աննա Վլադիկի Մարգարյան

տ.գ.թ., ասիստենտ,
ՀՀ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղար

Գևորգ Ասատուրի Ալոյան

տեխ.գ.թ., դոցենտ,
ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի գույքի կառավարան և ներդրումների իրականացման վարչության պետ

Արայիկ Աշիկի Ծատուրյան

ասիստենտ,Անկախ փորձագետ, Արայիկ Ծատուրյան ԱՁ, Շրջակա միջավայրի և Սոցիալական ռիսկերի կառավարման ծառայությունների մատուցում

Հարություն Իշխանի Մովսիսյան

երկր.գ.թ., դոցենտ, ՀՀ ՏԿԵՆ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Իռա Կորյունի Փանոսյան

տ.գ.թ., դոցենտ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման, կոոպերացիայի զարգացման վարչության պետ

Հայկ Ռազմիկի Հակոբյան

տ.գ.թ., դոցենտ

Նորա Հայկի Այվազյան

տ.գ.թ., ասիստենտ

Ալիսա Պետրոսի Գևորգյան

տ.գ.թ., դոցենտ

Նադեժդա Գրիշայի Աֆյան

տ.գ.թ., ասիստենտ

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շրջակա միջավայրի նախարարություն
2. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե
3. ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
4. Երևանի քաղաքապետարան
5. ՀՀ կադաստրի կոմիտե
6. Paris Peace Forum - Global Platform for goverence projects (Ֆրանսիա)
7. «Ֆլալեսս» կորպորացիա (ԱՄՆ)
8. Peakwellness ընկերություն (ԱՄՆ)
9. «ԱՅ ԷՍ ԷՍ ԴԻ» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ ՀԿ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի մագիստրոսները կարող են զբաղեցնել պետական կառավարման մարմինների, ներկայացուցչությունների, փոքր և մեծ կազմակերպությունների մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավար պաշտոններ, կարող են աշխատել որպես կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների բնագավառների մասնագետներ, կրթության բնագավառի մասնագետներ, հասարակական և հարակից գիտությունների/ տնտեսագետներ/ բնագավառների մասնագետներ, բնապահպանության և բնօգտագործման ոլորտի փորձագետներ, տեսուչներ և որակի հսկիչներ /անվտանգության և առողջապահության բնագավառի տեսուչներ և որակի հսկիչներ/, բնական գիտությունների և առողջապահության բնագավառների մասնագետներ /գյուղատնտեսության և անտառային տնտեսության խորհրդատուներ/, շրջակա միջավայրի մոնիտորինգի օպերատորներ, մարզային ինքնակառավարման մարմինների փորձագետներ և տեսուչներ, բնակարանային կոմունալ կազմակերպությունների աշխատողներ:

Շրջանավարտներ

Հարություն Գուլյան

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ

Արմինե Վարդանյան

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ_ի գլխավոր մասնագետ



Արթուր Կարապետյան

Text'nPayMe ընկերության համահիմնադիր